Պարույր Սևակ

Բարի գիշեր

Ուռճացած երեկոյի մեջ լույսերը կեռ-կտուցավոր
Վաղուց են գիշերը պեղել:
Մայթերը էլ չեն հորանջում մարդկային կրունկների տակ:
Փողոցներն ավլած են արդեն.
Մնացած կեղտերը մթան պիտի որ արևը մաքրի:
Քնել է - և աչքերը բաց-
Քնել է ողջ քաղաքն արդեն:
Եվ մի՞թե դեռ չես քնել դու.
-Սիրելի՛ս, քեզ գիշե՛ր բարի:
Ճյուղավոր թախիծն ուզում է դեռ պատվել նաև սաղարթով,
Որպեսզի հետո, երևի, ստվեր տա, թունո՛տ մի ստվեր:
Այդ թունոտ ստվերի ներքո թող քնի՝ ո՛վ որ կուզենա,
Բայց ո՛չ դու.
-Քեզ գիշե՛ր բարի:
Կննջեն պահակներն անգամ՝
Գիշերվա ա՛յն հովիվները,
Որ զգոն լույս ու լամպերի շնային հսկողության տակ
Մշտապես արածեցնում են մակաղված զգուշությունը:
Միայն ե՛ս բովանդակ գիշեր աչքերդս պիտի չփակեմ,
Քանի որ ամեն կերպ հիմա քո տեղն է բռնել կամենում
Մի ծանոթ պառաված օրիորդ՝

Այս կպչուն անքնությունը,
Որից ինձ չեն փրկում նաև քնաբեր կոչված դեղերը:
Ու ես այդ անքնությունից՝
ՊառավածՕրիորդից այս նույն,
Այնպես եմ վախենում հիմա,
Ինչպես որ երեխան է միշտ վախենում բուժակ բժշկից:
Դո՛ւ գոնե, դո՛ւ եղիր առողջ
Ու քնի՛ր.
-Քեզ բարի գիշե՛ր:
Ես կյանքում ինչքա՞ն գիշեր եմ ունեցել,-
Դժվար է ասել,
Քանի որ այդ հաշիվը պարզ չի արվում թվաբանությամբ,
Այլ միայն սիրո՛ մատներով,
Որ գուցե ծալվեն հաշվելիս,
Բայց դժվա՛ր, դժվա՛ր թե բացվեն:
Ես կանեմ այդ հաշիվը բարդ,
Դա թող ի՛նձ, իսկ ինքդդ քնի՛ր.
-Սիրելի՛ս, քեզ բարի գիշե՛ր:
Մի բարակ - քաղաքավարի անձրև է եկել ժամերով,
Եկել է առանց դադարի,
Եկել լոկ կարծես ի՛նձ համար,
Քանի որ արթուն մարդ չկա՛.
Բոլորը քնած են վաղո՛ւց:
Դե՛, դու էլ աչքերդդ փակիր.
-Սիրելի՛ս, քեզ բարի գիշե՛ր:
. . . . . .
. . . . . .
Հեռու չէ առավոտն արդեն:
Եվ - գուցե արևի ահից-
Դադարեց անձրևն էլ հիմա:

Անձրևն էլ դադարեց հիմա,
Մինչդեռ դու... շարունակվում ես:
Նաև դո՛ւ դադարիր մի քիչ.
Խղճա՛ ինձ, և ի՛նքդ էլ ասա.
-Սիրելի՛ս, քեզ բարի գիշե՛ր...

09.II.1964թ.
Երևան